1000 խոշոր հարկատուների կողմից 2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2024թ. 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1,77 տրլն դրամ, ինչը միայն 3,5%-ով է ավելի նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): Հարկ է արձանագրել, որ 2023-ին, դրան նախորդող տարվա համեմատությամբ, աճը շատ ավելի նշանակալի էր՝ շուրջ 15%, իսկ դրան նախորդող տարում՝ նույնիսկ 32%:



Գծապատկեր 1. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, որոշակի փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2024թ. 100 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 1.03 տրլն դրամ, ինչը շուրջ 50 մլրդ դրամով կամ 5 տոկոսով բարձր է նախորդ տարվա համեմատությամբ: 10 խոշորագույնների պարագայում աճը 47 մլրդ դրամ է կամ 12,4% (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2023-ի համեմատությամբ մոտ 2% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել են 35,2 մլրդ դրամ՝ 2023-ի 34,4 մլրդ դրամի փոխարեն: Նախորդ տարի այստեղ ևս աճն ավելի տպավորիչ էր՝ շուրջ 24% (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. համար կազմել է 29 անգամ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ որոշակիորեն ցածր է: Առաջին և վերջին

տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2024-ին 129 անգամ է, ինչը զգալիորեն բարձր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվ.-դեկտ. ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2024թ. արդյունքներով ՀՀ-ում գործող 316 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: Նախորդ տարի դրանց թիվը 311 էր, 2022-ին՝ 258: Նույն կերպ, 2024-ի հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով, ցանկում ներառված հարկատուների մեծ մասը՝ 673 հարկատու, վճարել է 500 մլն դրամը գերազանցող ընդհանուր գումարով հարկեր: Նախորդ տարվա համեմատությամբ այդպիսի հարկատուների թիվը ավելացել է 19-ով: 2022-ին այս ցուցանիշով ևս աճն անհամեմատ ավելի նշանակալի էր (գծ. 5):



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին պետք էր վճարել շուրջ 332 մլրդ դրամի հարկ, այն դեպքում, երբ 2023-ին

ցանկում ներառվելու համար պետք էր վճարել 324 մլն դրամի հարկ, իսկ 2022-ին բավարար կլիներ 261 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2024-ի հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 204 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այդպիսի ընկերությունների թիվը ավելացել է ընդամենը 4-ով: 340 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 36-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացումը՝ նախորդ տարվա համեմատ, սակայն դիտարկվող ժամանակահատվածի առավելագույն մակարդակի համեմատությամբ ցուցանիշը դեռևս ցածր մակարդակի վրա է: 2024թ. 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 32,9%-ը կազմել են ուղղակի հարկերը: Ընդ որում, առաջին հարյուրյակի հարկատուների մոտ ուղղակի հարկերի հարաբերակցությունը ընդհանուր հարկային վճարումների նկատմամբ միայն 30 տոկոս է, իսկ վերջին հարյուրյակի պարագայում՝ նկատելիորեն ավելի բարձր՝ շուրջ 38% (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2024թ. 12 ամիսների արդյունքներով, 109 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվը 102 էր, իսկ 2022-ին՝ 81:

2024թ. 200 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 509 սուբյեկտներ, 2023-ին հանրապետությունում գործել է 470 այդպիսի հարկատու (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Ընդհանուր առմամբ, 2024թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական հարկատուի՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածքը էապես չի տարբերվում նախորդ տարվա պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը, մլրդ դրամ	5.8	6.4	5.9	6.7	8.8	9.8	10.3
Շահութահարկ, մլն դրամ	1054	1080	805	711	1100	1591	1584
Եկամտային հարկ, մլն դրամ	892	1037	990	1090	1163	1480	1498
ԱԱՀ, մլրդ դրամ	2.4	2.58	2.4	2.7	3.4	4.0	4.0
Ակցիզային հարկ, մլն դրամ	800	980	970	820	970	1177	1242

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի արդյունքներով վճարել է 10,3 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 9,8 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,6 մլրդ դրամ (գրեթե նույնքան, ինչ 2023-ին), եկամտային հարկը՝ 1,5 մլրդ դրամ (2023-ին նորից գրեթե այդքան էր), ԱԱՀ-ն՝ 4,0

մլրդ դրամ (2023-ի մակարդակին հավասար), ակցիզային հարկը՝ 1,24 մլրդ դրամ (2023-ին՝ 1,18 մլրդ դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը	148.0	177.0	166.0	171.0	278.0	344	351
Շահութահարկ	19	22	20	22	-20	40.5	43.5
Եկամտային հարկ	41	47	52	56	78	79.4	90
ԱԱՀ	70	84	80	68	123	154	156
Ակցիզային հարկ	6	4.4	4.8	7.3	3.6	2.5	2.5

Վերջին հարյուրյակում ևս նախորդ տարվա համեմատությամբ շոշափելի տարբերություն չկա: Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. 12 ամիսների արդյունքներով վճարել է 351 մլն դրամի հարկ (2023-ին՝ 344 մլն դրամ), եկամտային հարկը՝ 90 մլն դրամ (2023-ին՝ 79 մլն դրամ), շահութահարկը՝ 43,5 մլն դրամ (2023-ին՝ 40,5 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 156 մլն դրամ (2023-ին՝ 154 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 83%-ն է, ինչը 3 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համեմատությամբ և ընդհանրապես՝ 2018-ից ի վեր առավելագույն մակարդակն է: Մյուս կողմից, նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին 2023-ի համեմատությամբ էապես չի փոխվել և կազմել է շուրջ 82% (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2023-2024թթ.

ընթացքում: Ընտրված թվով 100 կազմակերպությունների 65 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այսպես, նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում առաջատար են «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»-ը՝ +31,1 մլրդ դրամ; «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»-ը՝ +20,6 մլրդ դրամ; «ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»-ն՝ + 8,3 մլրդ դրամ: Նախորդ տարի առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում ներկայացված էին 4 բանկեր, իսկ այս տարի նման շոշափելի աճ արձանագրվել է միայն Յունիբանկի պարագայում՝ +3,8 մլրդ դրամ:

Ցանկի առաջին հարյուրյակում ներառված է 13 բանկ, որոնց հարկային վճարումները կազմել են 90 մլրդ դրամ: 2023-ին առաջին հարյուրյակում ներառված էին ավելի շատ բանկեր, իսկ նրանց հարկային վճարումները կազմել էին 126 մլրդ դրամ:

Առաջին հարյուրյակի ընկերություններից 36-ը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները ավելացրել են առնվազն 1 մլրդ դրամով, իսկ շուրջ 10 հարկատուի պարագայում արձանագրվել է վճարած հարկերի առնվազն կրկնապատկում (նախորդ տարի առնվազն կրկնապատում էր արձանագրվել առաջին հարյուրյակի ավելի քան 20 հարկատուների մոտ):

Ցանկի առաջին հարյուրյակի 22 ընկերություններ նախորդ տարվա համեմատությամ ավելի քան 1 մլրդ դրամով կրճատել են վճարած հարկերի ծավալը (2023-ին այդպիսի հարկատուները 11-ն էին): Անկում արձանագրած հարկատուների շարքում առանձնանում են հատկապես «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»-ը՝ նվազումը 18 մլրդ դրամի չափով, «ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»-ը՝ -5,2 մլրդ դրամ, «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»-ը՝ -4 մլրդ դրամ:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2023	2024	Աճը, %	Տարբերությունը, մլրդ դրամ
1	ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	70.9	102.0	44	31.1
2	ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ	46.1	66.7	45	20.6
3	ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ	55.3	63.6	15	8.3
4	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ	48.6	46.9	-4	-1.7
5	ՓՐԻԹԻ ՈՒԵՅ	33.3	36.3	9	3.0
6	ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՁԻ ԳՐՈՒՊ	23.7	24.2	2	0.5
7	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	25.7	23.5	-9	-2.2
8	ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ	26.5	21.3	-20	-5.2
9	ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	22.3	20.4	-8	-1.9
10	ՁԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ	22.7	20.2	-11	-2.5
11	ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ	22.5	19.5	-13	-3.0
12	ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ	12.1	18.6	54	6.5
13	ՍԻԹԻ	15.1	18.4	22	3.3
14	ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ	15.8	18.2	15	2.4
15	ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	14	15.2	8	1.2
16	ՖԼԵԾ	15.6	14.2	-9	-1.4
17	ԴԻՋԻԹԵՅՆ	7	13.5	92	6.5
18	ԱԿԲԱ ԲԱՆԿ	13.2	13.3	1	0.1
19	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	10.2	12.3	20	2.1
20	ԿԱԲԱՐԿՈ	7.8	11.8	51	4.0
21	ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ	13	11.5	-12	-1.5
22	ՄԱՔՍ ՕԻԼ	11.5	11.1	-3	-0.4
23	ԻՆԵԿՈԲԱՆԿ	9.9	11.1	12	1.2
24	ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ	9	10.5	16	1.5
25	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	3.5	10.3	195	6.8
26	ՅՈՒՔՈՄ	12.4	9.5	-24	-2.9
27	ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ	9.1	9.2	2	0.1
28	ՍՊԱ ՍԻԳԱՐՈՆ	5.3	8.5	60	3.2
29	ԱԹԵՆՔ	5.1	8.2	61	3.1
30	ԹԵՂՈՒՏ	4.3	8.1	88	3.8
31	ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ	7.9	8.1	2	0.2
32	ՅՈՒՆԻԲԱՆԿ	4.1	7.9	92	3.8
33	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	7.7	7.8	2	0.1
34	ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	8.7	7.8	-10	-0.9
35	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ	9.3	7.7	-17	-1.6
36	ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ	6.8	7.7	13	0.9
37	ՎԵՈԼԻԱ ՁՈՒՐ	7.1	7.4	4	0.3
38	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ	6.4	7.2	12	0.8
39	ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ	6.5	7.2	10	0.7
40	ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ	7.4	6.8	-8	-0.6
41	ԱՆԴԱԿՈ	6.7	6.7	1	0.0
42	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	24.9	6.7	-73	-18.2
43	ՆԵՎԻՍ	7.7	6.6	-14	-1.1
44	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	6.5	6.4	-1	-0.1
45	Այդի Բանկ	6.3	6.4	2	0.1
46	ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ	5.3	6.4	21	1.1
47	ԲԱՐՍԻՍ	6.1	6.3	3	0.2
48	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	5.8	6.1	4	0.3

49	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ	10	6.0	-40	-4.0
50	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ	6.8	5.9	-13	-0.9
51	ԷՎՈԿԱԲԱՆԿ	8	5.6	-29	-2.4
52	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ՏՐԱՆՍԳԱԶ	5.1	5.6	10	0.5
53	ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ	7.8	5.4	-31	-2.4
54	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	3.9	5.4	38	1.5
55	ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ	6.3	5.3	-15	-1.0
56	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	4.5	5.2	16	0.7
57	ՍԼԱՎ ԳՐՈՒՊ	5.1	5.2	2	0.1
58	ԴԵՐԺԱՎԱ-Ս	4.8	5.2	8	0.4
59	ԱԴԱՄԻՈՒՄ	5.1	5.2	2	0.1
60	ՍԱՍ-ԳՐՈՒՊ	5.6	5.2	-8	-0.4
61	ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ	4.5	5.1	14	0.6
62	ԹԵԼ-ՍԵԼ	5.3	5.0	-6	-0.3
63	*Արդշինինվեստբանկ*		5.0		5.0
64	ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	6.1	4.9	-20	-1.2
65	ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ	4.6	4.9	6	0.3
66	ԱՐԿԱԹ	3.9	4.8	23	0.9
67	ԱԳ ԻՄՊԵՔՍ	4.7	4.7	0	0.0
68	ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ	3.5	4.6	30	1.1
69	ԱՍԿԵ ԳՐՈՒՊ	6.5	4.4	-33	-2.1
70	ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ	4	4.3	8	0.3
71	ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ	2.5	4.3	72	1.8
72	ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ փակ բաժնետիրական ընկերություն	1.1	4.3	290	3.2
73	ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ	4.3	4.3	-1	0.0
74	ՖԱՍԹ ԲԱՆԿ	3.2	4.2	30	1.0
75	ՍՊԱՅԿԱ	4.4	4.1	-8	-0.3
76	ԲԱՂՐԱՄՅԱՆ	5.9	3.9	-33	-2.0
77	ՆՈՐ ԶՈՎՔ	6.2	3.9	-37	-2.3
78	ԲԱԼՋՈՒԳ ԿԱՊԻՏԱԼ	0.3	3.9	1189	3.6
79	ՎԵԴԻ-ԱԼԿՈ	1.5	3.9	157	2.4
80	ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ	4.8	3.8	-20	-1.0
81	ՀԱՅՓՈՍՏ	2.4	3.8	57	1.4
82	ԱԷՐՈՖԼՈՏ- ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ	3.1	3.8	21	0.7
83	ԲԱԳԱՐԻՈ ԳՈԼԴ	0.4	3.7	817	3.3
84	ԱՐԹ ՎԱՅՆ		3.5	-	3.5
85	ԼԵՔՍ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ	3.1	3.5	13	0.4
86	ՊԵՌՆՈ ՌԻԿԱՐ ԱՐՄԵՆԻԱ	3.1	3.5	13	0.4
87	ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	2.5	3.5	40	1.0
88	ԸԼԱՅՆ ԹԵՔՆՈԼՈՋԻ	2.7	3.5	29	0.8
89	Դ ԵՎ Ս ՔՈՆՍԹՐԱՔՇՆ	2.2	3.5	58	1.3
90	Կուբ Ինվեսթ ՓԲԸ	1.1	3.5	214	2.4
91	ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ	4.3	3.3	-23	-1.0
92	ԴԻ-ԴԻ-ԹՐԵՅԴ	3.3	3.3	-1	0.0
93	ԴՈՄՈՒՍ		3.3		3.3
94	ԱՐՄԲՐՈԿ	3.4	3.3	-4	-0.1
95	ԷՖՖԵԿՏ ԳՐՈՒՊ	3.2	3.2	1	0.0

96	ՁԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ	3.2	3.2	1	0.0
97	ԱՐՊԱՆԻՎ	3.2	3.2	0	0.0
98	ՁԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼՊԵՊՍԻ-ԿՈԼԱ ԲՈԹԼԵՐ	2.6	3.2	22	0.6
99	ՌԳ ԳՐՈՒՊ		3.2		3.2
100	ՐԱՅԴԹԵՔ ԷՅ ԷՄ	1.3	3.1	141	1.8

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2024թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով, նախորդ տարվա համեմատությամբ ծավալային և կառուցվածքային ուշագրավ փոփոխություններ է արձանագրել.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1,77 տրլն դրամ, ինչը միայն 3,5%-ով է ավելի նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2023-ին, դրան նախորդող տարվա համեմատությամբ, աճը շատ ավելի նշանակալի էր՝ շուրջ 15%, իսկ դրան նախորդող տարում՝ նույնիսկ 32%:,
- ✓ 100 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 1.03 տրլն դրամ, ինչը շուրջ 50 մլրդ դրամով կամ 5 տոկոսով բարձր է նախորդ տարվա համեմատությամբ,
- ✓ 10 խոշորագույնների պարագայում աճը 47 մլրդ դրամ է կամ 12,4%,
- ✓ 2% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը՝ 35,2 մլրդ դրամ՝ 2023-ի 34,4 մլրդ դրամի փոխարեն: Նախորդ տարի այստեղ ևս աճն ավելի տպավորիչ էր՝ շուրջ 24%,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. համար կազմել է 29 անգամ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ որոշակիորեն ցածր է,
- ✓ առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2024-ին 129 անգամ է, ինչը զգալիորեն բարձր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը,
- ✓ 2024թ. արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործող 316 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: Նախորդ տարի դրանց թիվը 311 էր, 2022-ին՝ 258,
  - ցանկում ներառված հարկատուների մեծ մասը՝ 673 հարկատու, վճարել է 500 մլն դրամը գերազանցող ընդհանուր գումարով հարկեր: Նախորդ տարվա համեմատությամբ այդպիսի հարկատուների թիվը ավելացել է 19-ով: 2022-ին այս ցուցանիշով ևս աճն անհամեմատ ավելի նշանակալի էր,
  - 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին վճարել են առնվազն 332 մլրդ դրամի հարկ, այն դեպքում, երբ 2023-ին ցանկում ներառվելու համար պետք էր վճարել 324 մլն դրամի հարկ, իսկ 2022-ին բավարար կլիներ 261 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը,

- 204 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այդպիսի ընկերությունների թիվը ավելացել է ընդամենը 4-ով,
- 340 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 36-ով,
- 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 32,9%-ը կազմել են ուղղակի հարկերը: Ընդ որում, առաջին հարյուրյակի հարկատուների մոտ ուղղակի հարկերի հարաբերակցությունը ընդհանուր հարկային վճարումների նկատմամբ միայն 30 տոկոս է, իսկ վերջին հարյուրյակի պարագայում՝ նկատելիորեն ավելի բարձր՝ շուրջ 38%,
- 109 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվը 102 էր, իսկ 2022-ին՝ 81,
- 2024թ. 200 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 509 սուբյեկտներ, 2023-ին հանրապետությունում գործել է 470 այդպիսի հարկատու:

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի արդյունքներով վճարել է 10,3 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 9,8 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,6 մլրդ դրամ (գրեթե նույնքան, ինչ 2023-ին), եկամտային հարկը՝ 1,5 մլրդ դրամ (2023-ին նորից գրեթե այդքան էր), ԱԱՀ-ն՝ 4,0 մլրդ դրամ (2023-ի մակարդակին հավասար), ակցիզային հարկը՝ 1,24 մլրդ դրամ (2023-ին՝ 1,18 մլրդ դրամ):

✓ Վերջին հարյուրյակում ևս նախորդ տարվա համեմատությամբ շոշափելի տարբերություն չկա: Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. 12 ամիսների արդյունքներով վճարել է 351 մլն դրամի հարկ (2023-ին՝ 344 մլն դրամ), եկամտային հարկը՝ 90 մլն դրամ (2023-ին՝ 79 մլն դրամ), շահութահարկը՝ 43,5 մլն դրամ (2023-ին՝ 40,5 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 156 մլն դրամ (2023-ին՝ 154 մլն դրամ):

✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 83%-ն է, ինչը 3 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համեմատությամբ և ընդհանրապես՝ 2018-ից ի վեր առավելագույն մակարդակն է: Մյուս կողմից, նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին 2023-ի համեմատությամբ էապես չի փոխվել և կազմել է շուրջ 82%:

✓ Խոշոր հարկատուների առաջին հարյուրյակի ընկերությունների 65 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում առաջատար են «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»-ը՝ +31,1 մլրդ դրամ; «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»-ը՝ +20,6 մլրդ դրամ; «ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»-ն՝ + 8,3 մլրդ դրամ: Նախորդ տարի առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում ներկայացված էին 4 բանկեր, իսկ այս տարի նման շոշափելի աճ արձանագրվել է միայն Յունիբանկի պարագայում՝ +3,8 մլրդ դրամ:

✓ Ցանկի առաջին հարյուրյակում ներառված է 13 բանկ, որոնց հարկային վճարումները կազմել են 90 մլրդ դրամ: 2023-ին առաջին հարյուրյակում ներառված էին ավելի շատ բանկեր, իսկ նրանց հարկային վճարումները կազմել էին 126 մլրդ դրամ:

✓ Առաջին հարյուրյակի ընկերություններից 36-ը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները ավելացրել են առնվազն 1 մլրդ դրամով, իսկ շուրջ 10 հարկատուի

պարագայում արձանագրվել է վճարած հարկերի առնվազն կրկնապատկում (նախորդ տարի առնվազն կրկնապատում էր արձանագրվել առաջին հարյուրյակի ավելի քան 20 հարկատուների մոտ):

- ✓ Ցանկի առաջին հարյուրյակի 22 ընկերություններ նախորդ տարվա համեմատությամբ ավելի քան 1 մլրդ դրամով կրճատել են վճարած հարկերի ծավալը (2023-ին այդպիսի հարկատուները 11-ն էին): Անկում արձանագրած հարկատուների շարքում առանձնանում են հատկապես «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»-ը՝ նվազումը 18 մլրդ դրամի չափով, «ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»-ը՝ -5,2 մլրդ դրամ, «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»-ը՝ -4 մլրդ դրամ: